

7676



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«09» 07 2024թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 117 - 24

Նախաձեռնող՝

«ԳԱՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
ք. Երևան, Մամիկոնյանց փողոց, 42-44

Գործունեությունը՝

Արմավիրի մարզի Հայկաշեն-Ծիածանի ԱԿԳԽ
հանքավայրի Ծիածան տեղամասի արդյունահանում
խոյ համայնք

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 117 - 24

«09» հուլիսի 2024թ.

**Արմավիրի մարզի Հայկաշեն-Ծիածանի ԱԿԳԽ հանքավայրի
Ծիածան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ԳԱՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն «Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ Արմավիրի մարզ, Խոյ համայնք,
Ծիածան բնակավայր

Ներածական մաս. Արմավիրի մարզի Հայկաշեն-Ծիածանի ԱԿԳԽ հանքավայրի Ծիածան տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի «թ» ենթակետի, դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. հանքավայրը գտնվում է Արմավիրի մարզում և համարվում է Արարատյան դաշտավայրի մաս: Հայցվող տարածքը վարչական տեսակետից գտնվում է Արմավիրի մարզի Խոյ խոշորացված համայնքում, Ծաղկունք և Ծիածան գյուղերի տարածքում: Ըստ կադաստրի կոմիտեի ներկայացված տվյալների՝ կորորդինատներով պարփակված տարածքները (մակերեսները՝ 2.97812 հա ու 8.79542 հա) կադաստրային քարտեզում տեղադրելիս իրենց սահմաններում ներառում են Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան ու Ծաղկունք և Արաքս համայնքի Խորոնք բնակավայրերի՝ պետական, քաղաքացիների ու համայնքային սեփականության գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, ջրային նպատակային նշանակությունների հողամասեր: Էջմիածին - Արմավիր ավտոմայրուղու կամրջի մոտ /հանքավայրի հյուսիսային ծայրակետը գտնվում է կամրջից 750 մ հյուսիս, իսկ հարավային ծայրակետը՝ կամրջից 1.3 կմ հարավ/, հեռավորությունն էջմիածին քաղաքից կազմում է մոտավորապես 1.5 կմ, մոտ 300-350մ լայնությամբ Քասախ գետի հունային և ողողատային նստվածքներում: Հայկաշեն-Ծիածանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Ծիածան տեղամասի տարածքի հիմնական ջրային երակը Քասաղ գետն է:

ՀԽԱՀ «Հայերկրաբանություն» ԱՄ պաշարների տարածքային հանձնաժողովի 1994թ. հունվարի 31-ի նիստի թիվ 323 արձանագրությամբ հաստատվել է Արմավիրի մարզի Հայկաշեն-Ծիածանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Ծիածան տեղամասի /այսուհետ՝ Ծիածանի տեղամաս/ պաշարները C1 կատեգորիայի 64583 հազ. հա



Հանքավայրի տարածքը նախատեսվում է մշակել բաց լեռնային աշխատանքների եղանակով, միարժամանակ երկու բացահանքի միջոցով (հյուսիսային և հարավային տեղամասեր): Արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել 1.7 խմ շերտի տարողությամբ Kamatsu PC300 և CAT 300D մակնիշի էքսկավատորովներով, նախատեսվում է արդյունահանված զանգվածը տեղափոխել ՋՏ կայանք՝ Shacman X3000 ավտոինքնաթափերի մեջոջով: ՋՏ կայանքից դուրս եկած պատրաստի հուքի բարձունը սպառողի ավտոտրանսպորտ կատարել 3 խմ շերտի տարողությամբ XCMG ZL50 բարձիչով, ավազի՝ հանքավայրի տարածքից տեղափոխումը կատարվելու է նաև սպառողների տրանսպորտային միջոցներով: Ընդհանուր մարվող պաշարների քանակը կազմում է՝ 1175000.0 խմ, տարեկան մարվող պաշարների քանակը կազմում է՝ 58750.0 խմ, ընդհանուր նախագծային կորուստները կազմում է՝ 78137.5 խմ կամ 6.65%: Ընդհանուր կորզվող պաշարների քանակը կազմում է՝ 1096862.5 խմ, տարեկան կորզվող պաշարների քանակը կազմում է՝ 54843.1 խմ: Ընդհանուր մակաբացման ապարների քանակը կազմում է՝ 11750.0 խմ, տարեկան մակաբացման ապարների քանակը կազմում է՝ 587.5 խմ, բացահանքի օտարման տարածքը կազմում է 117500.0 քմ, արտադրական հրապարակի մակերեսը կազմում է 6000.0 քմ, ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

Ճանապարհից հյուսիս ընկնող հատված

X	Y	X	Y
1. 8436801.409	4448574.298	10. 8436852.634	4448860.219
2. 8436793.533	4448511.102	11. 8436913.644	4448916.372
3. 8436692.695	4448481.932	12. 8436927.571	4448949.964
4. 8436743.277	4448582.730	13. 8436961.196	4449019.114
5. 8436754.400	4448649.653	14. 8436977.904	4449013.058
6. 8436760.402	4448666.481	15. 8436954.300	4448974.200
7. 8436772.592	4448718.234	16. 8436891.643	4448790.722
8. 8436820.360	4448796.503	17. 8436810.229	4448643.732
9. 8436820.360	4448813.712	1. 8436801.409	4448574.298

S = 30005.853 քմ

S = 3.0 հա

Ճանապարհից հարավ ընկնող հատված

X	Y	X	Y
1. 8436214.256	4447348.707	20. 8436509.939	4448167.335
2. 8436176.754	4447282.682	21. 8436602.835	4448190.361
3. 8436147.325	4447249.670	22. 8436517.273	4448125.252
4. 8436119.749	4447236.636	23. 8436504.076	4448090.752
5. 8436084.074	4447228.381	24. 8436474.715	4448053.916
6. 8436133.300	4447294.500	25. 8436444.405	4447998.020
7. 8436148.506	4447349.990	26. 8436439.780	4447929.941
8. 8436175.200	4447447.400	27. 8436416.125	4447880.190
9. 8436178.504	4447510.769	28. 8436395.876	4447851.044
10. 8436188.126	4447519.268	29. 8436361.158	4447827.389
11. 8436196.213	4447544.107	30. 8436350.878	4447815.108
12. 8436191.648	4447555.607	31. 8436333.955	4447738.561
13. 8436205.921	4447592.092	32. 8436345.897	4447660.651
14. 8436220.090	4447601.181	33. 8436333.456	4447637.494
15. 8436239.577	4447664.286	34. 8436327.500	4447513.660



16. 8436239.577 4447770.788 35. 8436341.011 4447446.536
 17. 8436298.904 4447898.887 36. 8436271.094 4447474.737
 18. 8436344.231 4447969.802 37. 8436254.468 4447402.760
 19. 8436457.841 4448106.586 1. 8436214.256 4447348.707

S = 87548.381 քմ

S = 8.75 հա

Ընդհանուր՝ S = 11.75 հա

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ արդյունահանվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Հայցվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Ծիածան տեղամասի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքները նախատեսվում է իրականացնել բաց մշակմամբ՝ երկու բացահանքերի միջոցով: Բացահանքերի վերջնական եզրագծում ընդգրկվել է 1175000.0 խմ ավազակոպճագլաքարային նյութերի մարվող զանգված, մակաբացման ապարների ծավալը կազմում է 11750.0 խմ: Օգտակար հանածոն ներկայացված է ավազակոպճագլաքարային խառնուրդով, որի հզորությունը կազմում է միջինը՝ 10.0 մ, և ավազի պարունակությունը կազմում է միջինը 44 %: Օգտակար հանածոյի ավազակուտակը բնութագրվում է համեմատաբար համասեռ ներքին կառուցվածքով, նրանում կոպճի կամ կավային նյութի առանձին շերտեր չեն հանդիպում: Բացահանքի վերջնական եզրագծում օգտակար հանածոյի կորզվող պաշարները՝ 1096862.5 խմ, օգտակար հանածոյի տարեկան կորզվող պաշարները՝ 54843.1 խմ, մակաբացման ապարների տարեկան ծավալը՝ 587.5 խմ: Մշակման միջին խորությունը՝ 10.1 մ, որից՝ 10.0 մ օգտակար հանածո, 0.1 մ մակաբացման շերտ: Հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել 5 մ բարձրությամբ աստիճաններով որոնք մարվում են 30-40 աստիճան թեքությամբ, երկու մարվող աստիճանների միջև թողնվում են 2 մ լայնությամբ բերմաներ: Հայկաշեն-Ծիածանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի Ծիածան տեղամասի բացահանքերի պարամետրերն են՝ բացահանք 1 (հյուսիսային տեղամաս, Բլոկ 1-Շ1)՝ առավելագույն երկարությունը – 566.0 մ, առավելագույն լայնությունը՝ 80.0 մ: Բացահանք 2 (հարավային տեղամաս, Բլոկ 2-Շ1)՝ առավելագույն երկարությունը՝ 1050.0 մ, առավելագույն լայնությունը՝ 85.5 մ, մշակման միջին խորությունը՝ 10.1 մ, որից՝ 10.0 մ օգտակար հանածո, 0.1 մ մակաբացման շերտ: Բացահանքի վերջնական եզրագծում ընդգրկվել է 1175000.0 խմ ավազակոպճագլաքարային նյութերի մարվող զանգված (համապատասխանաբար՝ Բլոկ 1-Շ1՝ 300000.0 խմ և Բլոկ 2-Շ1՝ 875000.0 խմ), մակաբացման ապարների ծավալը կազմում է 11750.0 խմ (համապատասխանաբար՝ Բլոկ 1-Շ1՝ 3000.0 խմ և Բլոկ 2 Շ1՝ 8750.0 խմ):

Պարճառաքանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով նախնական գնահատման և փորձաքննության փուլերում Արմավիրի մարզի Խոյ համանքի Ծիածան բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ատացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի

պահանջներով: Փորձաքննության գործընթացում վեր են հանվել հետևյալ հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել եզրակացության կազմման համար.


Փորձաքննական հիմնավորումներ


1. Համաձայն կադաստրի կոմիտեի կողմից փորձաքննական գործընթացում ստացված կարծիքի՝ Արմավիրի մարզի Հայկաշեն-Ծիածանի ԱԿԳԽ հանքավայրի Ծիածան տեղամասի արդյունահանման աշխատանքների համար հայցվող տարածքի կորդինատներով պարփակված տարածքը ներառում է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան ու Ծաղկունք և Արաքս համայնքի Խորոնք բնակավայրերի՝ պետական, քաղաքացիների ու համայնքային սեփականության՝ գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, ինչպես նաև ջրային նպատակային նշանակությունների հողամասեր /մինչդեռ ՇՄԱԳ հաշվետվությունում բացակայել է հայցվող տարածքում Արաքս համայնքի Խորոնք բնակավայրի վարչական սահմանում ընդգրկված հողամասի վերաբերյալ տեղեկատվությունը և Արաքս համայնքում իրականացված հանրային քննարկումների արձանագրությունը և տեսաձայնագրությունը/:
2. Քանի որ հայցվող տարածքը գտնվում է Քասախ գետի ողողահունում և ընդգրկում է գետի ջրածածկվող տարածքներ, ջրապահպան գոտիներ, ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման տարածքներ, որոնք իրենց բնական վիճակով ենթակա են պահպանման՝ որպես էկոլոգիական համակարգեր, հետևաբար ջրային հողերի օգտագործումը ընդերքօգտագործման նպատակով կարող է բացասական ազդեցություն և բնապահպանական ռիսկեր առաջացնել ջրային համակարգերի, հոսքի ձևավորման գոտիների, ինչպես նաև Քասախ գետի ջրի որակի և քանակի վրա:
3. Հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 20.01.2005թ. «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջները՝ Արմավիրի մարզի Հայկաշեն-Ծիածանի ԱԿԳԽ հանքավայրի Ծիածան տեղամասի արդյունահանման աշխատանքների իրականացումը Քասախ գետի ողողահունում հանդիսանում են ոչ նպատակահարմար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ «ԳԱՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Հայկաշեն-Ծիածանի ԱԿԳԽ հանքավայրի Ծիածան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝  Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝  Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝  Վարդան Հարությունյան